ԴԻԱՆՆԱ ՄԻՐԻՋԱՆՅԱՆ

ՎԱՂ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԽԵՑԵՂԵՆԻ ՄԻ ՏԵՍԱԿԻ ՄԱՍԻՆ

Ե-Զ դդ. հոգեւոր ճարտարապետական հուշարձանների կառուցման եւ վերանորոգման աշխատանքների լայն ծավալները զարկ տվեցին կղմինդրի արտադրությանը: Այն վաղ միջնադարյան խեցեգործական արտադրանքի մեջ առանձին խումբ է կազմում:

Կղմինդրի ուսումնասիրությունը կարեւոր աղբյուր է արտադրության, առեւտրի կազմակերպման ու վերահսկման, խեցեգործական արհեստանոցների գործունեության, այդտեղ պատրաստվող բազմաբնույթ արտադրանքի, աշխատուժի վերաբերյալ: Կարեւոր նյութ է նաեւ հուշարձանների թվագրության համար:

Հայաստանում կղմինդրը հայտնի է դեռեւս հելլենիստական շրջանից, որի օգտագործումը շինարարական բարձր տեխնիկայի եւ քաղաքային մշակույթի վկայություն է: Մեզ հայտնի ամենահին կղմինդրները հայտնաբերվել են Արտաշատի պեղումներից[1]: Դրանց գանգվածային բնույթը եւ պատրաստման որակը վկայում են, որ կղմինդրի արտադրությունը անտիկ շրջանում գտնվել է զարգացման բարձր մակարդակի վրա: Հավանաբար կղմինդրի արտադրությունը Հայաստան եւ հարեւան երկրներ անցել է Փոքր Ասիայից: Այդ մասին կարող է վկայել նաեւ անվանումը՝ «կղմինդր», որը փոխ առնված է հունարեն «կերամիս» բառից[2]: Միջնադարում եւս ավանդաբար շարունակվում է հելլենիստական տափակ (սոլեն) եւ կիսակլոր (կալիպտեր) կղմինդրների օգտագործումը: Կղմինդրածածկ տանիքի կառուցվածքը հասկանալու առումով կարեւոր նյութ է տալիս Է դարից ի վեր գրեթե անփոփոխ պահպանված Աշտարակի Կարմրավոր եկեղեցու գմբեթը:

Հայաստանի բազմաթիվ հուշարձաններից հայտնի տափակ կղմինդրների օրինակները հիմնականում նման են իրար (Տեկոր, Մրեն, Դվին, Աղցք, Կարմրավոր, Արուճ, Թալին)[3]:

Վաղ միջնադարում տափակ կղմինդրը ենթարկվում է որոշակի փոփոխությունների եւ էականորեն տարբերվում անտիկ շրջանի սոլեններից: Նախ, վաղ միջնադարյան կղմինդրները հարթ սալիկի ձեւով թեեւ կրկնում են ուշ անտիկ շրջանի օրինակներին, սակայն չափերով համեմատաբար փոքր են եւ չունեն տեսակների բազմազանություն (Արտաշատից հայտնաբերված հելլենիստական կղմինդրների տիպաբանական դասակարգման համաձայն տափակ սալիկաձեւը չորս տիպի է, կիսակլորը՝ երեք)[4]: Չափերի փոքրացումը, հավանաբար, պայմանավորված էր ծածկի կառուցվածքի փոփոխությամբ, ինչպես նաեւ տանիքին թեթեւություն հաղորդելու հանգամանքով: Երկրորդ տարբերությունը տափակ կղմինդ-

1 Տե՛ս **А. Канецян,** Античные черепицы из раскопок Арташата, "Советская археология", 1984, թ.1, էջ 183-190.**A. Kanetsian,** Cittae insediamenti nell" Armeniadi etaclassica.- in Ai piedi dell' Ararat, Torino, 1998, էջ 65-71:

2 Տե՛ս **Ժ. Խաչատրյան,** Քաղաքամայր Արտաշատը պատմահնագիտական հետազոտությունների լույսի ներքո.- ՊԲՀ, 2007, թ. 2, էջ 23. **Ю. Гогошидзе,** Самадло, Тбилиси, 1979, էջ 61:

3 Տե՛ս **А. Якобсон,** К изучению раннесредневековой страительной керамики Армении.- ИЖФ, 1979, թ.1, էջ 217-223:

4 Տե՛ս **А. Канецян,** անդ, էջ 183-189:

րի կողային սրոնրին հարվածի արտահայտված նեղացումն է, որով այն հարմարեցված է վերին կղմինդրի նեղ մասը ներքևինի վերին հարվածի մեջ ազուցելուն: Երրորդ տարբերությունն այն է, որ տափակ կղմինդրի կողային ելուստները ուղիղ են եւ բարձր՝ հասնելով 5-6 սմ: Վաղ միջնադարում կղմինդրածածկ էին հիմնականում պաշտամունքային կառույցները: Այս շրջանից մեզ հասած պալատական շինությունները՝ Զվարթնոցի, Ավանի, Դվինի Ե եւ Է դարերի եւ Արուճի կաթողիկոսական պալատները կղմինդրածածկ չեն, ի տարբերություն անտիկ շրջանի, երբ կղմինդրն օգտագործվում էր նաեւ պետական, հասարակական նշանակության շինությունների ծածկերի համար[5]: Իրարից տարբերվում են նաեւ Դ-Ե դդ. եւ Է դարի կղմինդրները: Օրինակ, Է դ. տափակ կղմինդրների վրա առկա են ջրահեռացման առվակները (նկ.1,1a), թեեւ հազվադեպ կան նաեւ Դ-Ե դդ. թվագրվող օրինակների վրա[6]: Դրանք չափերով ավելի փոքր են (անտիկ շրջանի կղմինդրի համեմատ փոքր է շուրջ 15սմ): Է դ. կիսակլոր կղմինդրները դառնում են խոռոչակաձեւ՝ ի տարբերություն Դ-Ե դդ. փռված օրինակների: Կղմինդրները տանիքին շարվել են ներքևից վերեւ: Կիսակլոր տեսակը, տափակ կղմինդրների կողերն իր մեջ առնելով՝ կանխել է ջրի ներթափանցումը: Ուսումնասիրվող շրջանի կիսակլոր կղմինդրներն ի տարբերություն անտիկ շրջանում կիրառվող երկթեք կամ եռանիստ տարբերակների՝ ավելի պարզեցված են զանգվածային արտադրության համար: Դրանք մի ծայրում նեղանալով դրվել են հաջորդ կլոր կղմինդրի լայն հարվածի մեջ: Նեղ ծայրից մոտ 6սմ հեռու առկա է բարձր գոտի, որով մի կղմինդրը ամրանում էր մյուսին եւ կանխվում էր սահքը տանիքից: Երկու ծայրերում նման գոտիներ ունեն միայն առաջին շարքի համար նախատեսված կիսակլոր կղմինդրները: Դրանք տափակ կղմինդրներին ամրացվում էին կրաշաղախով: Հետաքրքիր է, որ Վրաստանում կան տափակ եւ կիսակլոր հարվածները միասին պատրաստված կղմինդրներ[7]: Նմանատիպ կղմինդրի օրինակներ զարգացած միջնադարյան շերտերից հայտնաբերվել է նաեւ Արցախի հուշարձաններում[8]: Ծածկերի եզրերը պսակող կղմինդրները պատրաստվում էին եռանկյունաձեւ ճակտոնով, որը զարդարում էին թաց կավին մատների կամ բութ գործիքի օգնությամբ արված տարբեր զարդամոտիվներով (նկ.2): Հայաստանում առայժմ հայտնի չեն արձանագիր ճակտոններ, ինչպիսիք կան Աբիսգիայում[9], սակայն տեղական օրինակները եւս ուշագրավ են: Զվարթնոցի ճակտոնների եռանկյունու եզրերով արված են ժապավենաձեւ ալիքներ, իսկ ներսը լցված է լայն ակոսներով: Հետաքրքիր օրինակ է խաչի պատկերով ճակտոնը: Աշտարա-

5 Տե՛ս **Ժ.Խաչատրյան,** Գառնի ամրոցի պեղումները, ՀՍՍՀ-ում 1977-1978թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված զեկ. թեզ., Երեւան, 1979, էջ 22-23. **Ա.Տոնիկյան,** Դիտողություններ Գառնիի բաղնիքի ծածկի մասին, (վերակազմության փորձ). «Հայ ժողովրդական մշակույթի հետազոտման հարցեր», Երիտասարդ գիտնականների VI կոնֆերանս, զեկ. թեզ., Եր., 1984, էջ 10-11. **Ж. Хачатрян, А. Тоникян,** Античная баня в Гарни, ВДИ, 1986, թ. 3, էջ 141, 147. **Ժ. Խաչատրյան,** Քաղաքամայր Արտաշատը պատմահնագիտական հետազոտությունների լույսի ներքո, ՊԲՀ, 2007, թ. 2, էջ 15:

6 Տե՛ս **A. Kalantarian,** Dvin, histoire et archeology de la ville medieval, Neuchatel-Paris, 1996, էջ 120-121:

7 Տե՛ս **Р. Ваидов,** Раннесредневековое городище Судагылан (Мингечаур), Краткие сообщения института истории материальной культуры АН СССР, պրակ 54, 1954, էջ 136, նկ. 64, թ.4:

8 Տե՛ս **Ն.Պետրոսյան, Լ.Գիրակոսյան, Վ. Սաֆարյան,** Հանդաբերդի վանքը եւ նրա պեղումները, Եր., 2009, էջ 40, 91: Նշենք, որ նմանատիպ կղմինդրներ անտիկ շրջանում հայտնի են Հունաստանում եւ կոչվում են կորնթական (**В. Гайдукевич,** Строительные керамические материалы Боспора, "Боспорские черепицы", Известия ГАИМК, պրակ 104, 1934, էջ 236):

9 Տե՛ս **А. Кация,** Памятники архитектуры в долине Цкуара, "Материалы по археологии Абхазии", Тбилиси, 1967, էջ 66, աղյուսակ IX/2:

կի Կարմրավորի որոշ ճակտոններ զարդարված են կենաց ծառի պատկերներով (նկ.3): Էջմիածին քաղաքի մշակույթի տան շրջակա տարածքում 1979թ. հետախուզական պեղումների ժամանակ հայտնաբերվել են կենաց ծառի ռելիեֆ ու ներճկված, իսկ հավասարաթեւ խաչի միայն ռելիեֆ պատկերներով զարդարված ճակտոններ[10] (նկ.4,4a): Վրաստանում եւս հանդիպում են խաչերով զարդարված, ինչպես նաեւ կենդանապատկեր ճակտոնների օրինակներ: Աբխազիայում խաչազարդ են նաեւ տափակ կղմինդրները[11]:

Եթե խաչապատկերներով կղմինդրները բնորոշ են պաշտամունքային կառույցների համար, ապա կենդանիների պատկերների համար մասնագետներն առայժմ բացատրություն չեն գտել[12] (գուցե ծագում են անտիկ ավանդույթներից[13]): Հայաստանում կենդանապատկեր օրինակներ առայժմ հայտնի չեն: Փոխարենը Զվարթնոցում պահպանվել է ճակտոն դիմապատկերով (նկ.5): Հավանական ենք համարում, որ նման ձեւով զարդարված ճակտոններ Զվարթնոցի տանիքի ծածկում եղել են մի քանիսը, որոնք հավանաբար, խորհրդանշել են «զվարթուններին»: Անտիկ շրջանում ճակտոնները զարդարում էին Գորգոնայի եւ Հելիոսի դիմապատկերներով[14] (նկ.6), որոնք կառույցը պահպանելու գործառույթ ունեին: Նմանօրինակ գործառույթ հավանաբար ունեին նաեւ Զվարթնոցի ճակտոնների պատկերները: Ճակտոնների առկայությունը ծածկերի վրա առանձին շքեղություն էր տալիս շենքի հարդարանքին եւ ուներ զուտ գեղագիտական նշանակություն: Կղմինդրները կառույցի ծածկին ամրացվում էին կրաշաղախի միջոցով: Հայաստանի հուշարձանների պեղումներից հայտնի են նաեւ այլ տիպի, օրինակ տարբեր լայնության կղմինդրներ, որոնք ըստ կիրառական առանձնահատկությունների տեղադրվել են շենքի ծածկի տարբեր մասերում:

Կղմինդրների առաջին շարքերն ամրացվում էին ծածկի կրաշաղախին երկաթե գամերի միջոցով: Գամերի համար նախատեսված անցքերն արվում էին մինչեւ կղմինդրի թրծումը (նկ.7, 8): Հաջորդ շարքերն արդեն տանիքին ամրանում էին կրաշաղախով: Կղմինդրները պատրաստվում էին բաց կաղապարներում: Սակայն նույն հուշարձանում տարբեր չափերի, հատկապես տափակ կղմինդրների առկայությունը, ենթադրել է տալիս, որ դրանց կաղապարները միաչափ չէին:

Դեռեւս անտիկ շրջանում կղմինդրի արտադրությունը գտնվել է բարձր խավի, անգամ թագավորի վերահսկողության ներքո[15]: Վաղ միջնադարում այն կենտրոնացած էր մեծ բնակավայրերում գտնվող արհեստանոցներում: Հայաստանում կղմինդր արտադրվել է Դվինում, Աղցքում, Վաղարշապատում, ինչը վկայում են հայտնաբերված խուտանները եւ որոշ առանձնահատկություններ (գրեր, պատկերներ):

---

10 Տես **Գ. Կարախանյան, Գ. Մարգսյան, Ն. Մելքոնյան, Պ. Նարությունյան,** Հայաստանի վաղ միջնադարի նորահայտ հուշարձաններ, «Բանբեր Երեւանի համալսարանի», 1992, թ. 2, էջ 158:

11 Տես **И. Бердзенишвили,** К вопросу о распространении христианства в Абхазии, «Հայ ազգաբանության եւ հնագիտության խնդիրներ-3», Եր., 2007, էջ 53:

12 Տես **Д. Джгамая,** Производство строительной керамики в феодальной Грузии, "Археологические памятники феодальной Грузии", I, Тбилиси, 1969, էջ 102:

13 "Античные государства Северного Причерноморья", "Археология СССР", Москва, 1984, էջ 277, թ. 4:

14 Տես **В. Гайдукевич**, անդ, էջ 248."Античные государства Северного Причерноморья", էջ 277, թ. 4:

15 Տես **Б. Граков,** Эпиграфические документы царского черепичного завода в Пантикапее, "Известия ГАИМК", պրակ 104, 1934, էջ 202-210. **В. Гайдукевич**, անդ, էջ 215, 219, 266-296:

Նկ. I



Նկ. Iա

Tafel 4

Tafel 4III

Tab. 2

Tab. 3

Tab. 5

Tab. 6

Tafel 7

Tafel 8

Նկ. 9

Նկ. 9ա

Նկ. 10

Նկ. 11

Թվ. 12

Թվ. 12ա

Վրաստանում, Տավրայում հանդիպում են վարպետի նշանով կղմինդրներ: Շատ ուշագրավ է Տավրայից գտնված կղմինդրը, որի վրա առկա է վարպետի նշան հայերեն Ա տառի տեսքով, սա անուղղակիորեն վկայում է այստեղ հայ վարպետների գործունեության մասին[16]: Հայաստանի որոշ հուշարձաններում կղմինդրներն ունեն արձանագրություններ: Դրանցով հարուստ են հատկապես Հյուսիսային Հայաստանի հուշարձանների կղմինդրները[17]: Արցախում այս ավանդույթը շարունակվեց նաև զարգացած միջնադարում[18]: Արձանագիր կղմինդրներ հայտնաբերվել են նաև միջնադարյան Հայաստանի մայրաքաղաք Դվինի պեղումներից, որոնք պատկանում են Սուրբ Գրիգոր Լուսավորիչ կաթողիկե եկեղեցուն: Դրանք վերաբերում են եկեղեցու վերջին վերակառուցմանը, որն իրականացրել է մարզպան Սմբատ Բագրատունին 607-617թթ.: Որ այդ կղմինդրները պատրաստվել են հատուկ պատվերով, վկայում է սրանց թրծելուց առաջ արձանագրված լինելը: Կղմինդրներից մեկի վրա հիշատակված է կաթողիկե եկեղեցու՝ Սուրբ Գրիգոր անունը[19]: Եզակի է Կաթողիկե եկեղեցու շրջակայքից 1938 թ. գտնված է դ. հարթ կղմինդրը, որի վրա Քրիստոսի փորագիր պատկերն է[20]: Կղմինդրի վրա արձանագրություն թողնելու սովորույթը գալիս է դեռևս նախորդ դարաշրջանից. Արտաշատ մայրաքաղաքի պեղումներից հայտնաբերվել են լատիներեն արձանագրությամբ դրոշմված կղմինդրներ (ցավոք, անընթեռնելի)[21]: Տափակ կղմինդրներով են ծածկված Վաղարշապատի դամբարանադաշտից հայտնաբերված երկու՝ կարասային եւ սալարկղային թաղումները,[22] Արտաշատից մեկ՝ թիվ 70 դամբարանը[23] եւ Վայոց ձորի մարզի Չիվա գյուղից[24]: Հայաստանում կղմինդրածածկ թաղումները առայժմ հազվադեպ են, ինչը ենթադրել է տալիս, որ հիշյալ թաղումները կարող են պատկանել հռոմեացիներին: Թաղման նման կառույցները շատ տարածված էին Հռոմեական կայսրության եւ դրա ազդեցության տակ գտնվող շրջաններում, ինչպես օրինակ Վրաստանում[25], Մերձեւ-

16 Տե՛ս **А. Якобсон,** Керамка и керамическое производство Средневековой Таврикии, Ленинград, 1979, էջ 68, նկ. 41, թ. 68:

17 **Ն. Պետրոսյան, Ս. Հորոսյան,** Աքորու վաղ միջնադարյան գաճարի պեղումները. «Հնագիտական աշխատանքները Հայաստանի նորակառույցներում» (1986-1987թթ. պեղումների արդյունքները),Ի, Եր., 1993, էջ 132. **A. Kalantaryan, G. Karakhanyan, H. Melkonyan, H. Petrosyan, N. Hakobyan, F.Babayan, A. Zhamkochyan, K. Nawasardyan, A. Hayrapetyan,** Armenia in the cultural context of east and west, ceramics and glass (4th-14th centuries), Yerevan, 2009, fig.54/2:

18 Տե՛ս **Ն. Պետրոսյան, Լ. Կիրակոսյան, Վ. Սաֆարյան,** անդ, էջ 81-82:

19 Տե՛ս **Կ. Ղաֆադարյան,** Դվին քաղաքը եւ նրա պեղումները, Եր., 1952, էջ 246-250. **Ս. Տեր-Ավետիսյան,** Հայագիտական հետազոտություններ, Եր., 2010, էջ 278-282:

20 Տե՛ս **Կ. Ղաֆադարյան,** անդ, էջ 254:

21 Տե՛ս **Ժ. Խսչատրյան,** Արտաշատից հայտնաբերված լատիներեն արձանագրությամբ դրոշմված կղմինդրներ եւ աղյուսներ.- ՊԲՀ, 2006, թ.1, էջ 230-235:

22 Տե՛ս **Ռ. Թորոսյան, Ս. Կրկյաշարյան,** Հնագիտական նորույթներ Էջմիածնից, ՊԲՀ.- 1971, թ. 4, էջ 287:

23 Տե՛ս **Ժ. Խսչատրյան,** Արտաշատ II, Անտիկ դամբարանադաշտեր (1971-1977թթ. պեղումները). «Հնագիտական պեղումները Հայաստանում», թ.17, Եր., 1981, էջ 22:

24 Տե՛ս **A. Kalantaryan, G. Karakhanyan, H. Melkonyan, H. Petrosyan, N. Hakobyan, F. Babayan, A. Zhamkochyan, K. Navasardyan, A. Hayrapetyan,** անդ, էջ 157:

25 Տե՛ս **Г. Ломтатидзе**, Археологические раскопки в древгрузинской столице Мцхета, Тбилиси, 1955, էջ 63-65, աղյուսակ XIII/2.**А. Апакидзе, В. Николайшвили, Г. Гиунашвили, Г. Манджгаладзе, М. Дзнеладзе, В. Садрадзе, Р. Давлианидзе, Н. Глонти,** Археологические раскопки в Мцхета и ее округе, "Полевые археологические исследования в 1982г".(краткие сообщения), Тбилиси, 1985, էջ 44-46.**Г. Лордкипанидзе, Н. Кигурадзе, Т. Тодуа,** Раскопки Пицундского некрополя, "Полевые археологические исследования в 1986г".(краткие сообщения), Тбилиси, 1991, էջ 85-87:

ծովյան բնակավայրերում[26], Գալիայում[27]: Հետաքրքիր է, որ Վրաստանում այնքան շատ են կղմինդրածածկ, անգամ ամբողջությամբ կղմինդրներով պատրաստված դամբարանները, որ հնարավոր է ենթադրել, թե դրանք հատուկ պատրաստվել են թաղումների համար: Սակայն ուսումնասիրողները առայժմ դա քիչ հավանական են համարում եւ կարծում են, որ կղմինդրները վերցված են շինարարական պահուստից[28]: Անտիկ Հայաստանում կղմինդրը նման լայն տարածում չուներ, ամենաշատ գտածոները Արտաշատից են, որը հելլենիստական աշխարհի նշանավոր քաղաքներից էր, իսկ այլ բնակավայրերից կղմինդր կամ չկա, կամ շատ սակավ է: Այս հանգամանքը մեկ անգամ եւս կարող է փաստել Հայաստանում Հռոմեական կայսրության ազդեցության թուլության մասին: Անգամ Գառնիի տաճարն իր պերիպտերիալ հորինվածքով լինելով անտիկ ճարտարապետության արգասիք, կառուցված է քարե կղմինդրներով (նման կղմինդր հայտնի է նաեւ Դվինից)[29]: Իսկ Հայաստանում կղմինդրածածկ տանիքի ամենավաղ օրինակը՝ Այգրեւանի հայտնի տաճարի մանրակերտը, առայժմ միայն ենթադրություն է[30]:

Վաղ միջնադարում կղմինդրե թաղումներ առայժմ հայտնաբերվել են միայն Լոռու մարզի Շնող գյուղից 8 կմ հարավ ընկած Զորիգեղ կոչվող հանդամասում 2010թ. կատարված հետախուզական պեղումների ժամանակ[31]: Դրանք ակներեւաբար վերաթաղումներ են: Կղմինդրածածկ այս կառույցներից մեկը բացվել է վաղ միջնադարյան քարարկղային երկու թաղումների միջեւ (կղմինդրի երկ. 44սմ, լայն. 35սմ): Որպես երկայնական պատեր օգտագործել են քարարկղների պատերը, իսկ նեղ կողմերը առանց եզրային քարերի են (նկ.9, 9a): Երկրորդ կղմինդրածածկ (կղմինդրի երկ. 44սմ, լայն. 35սմ) վերաթաղման երկայնական պատերից մեկը քարարկղի հյուսիսային պատն է, իսկ մյուսը՝ կղմինդրով է (նկ.10): Այս թաղման լայնական պատերը անմշակ քարերով են: Կարելի է ենթադրել, որ քարարկղները կառուցելիս շինարարները հանդիպել են թաղումների եւ ոսկորները վերաթաղել են՝ ծածկելով արդեն գործածությունից դուրս եկած կղմինդրներով: Նման երեւույթ հայտնի է նաեւ Թալինի դամբարանադաշտի պեղումներից, երբ վերջույթները եւ գանգը խնամքով դրված էին քրիստոնեական ծեսով թաղվածների ոտքերի տակ կամ սալարկղում միջնապատով առանձնացրած հատվածում[32]: Նշենք նաեւ, որ Զորիգեղի պեղավայրի ողջ մակերեսով թափված են կղմինդրի բազմաթիվ բեկորներ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ խնդրո առարկա ժամանակահատվածում կղմինդրածածկ եղել են հոգեւոր կառույցները, հավանաբար այդ բեկորները պատկանել են նման շինության: Այս թաղումները առայժմ եզակի են եւ

26 Տե՛ս **М. Парович-Пешикан,** Некрополь Ольвии эллинистического времени, Киев, 1974, էջ 12-13:

27 Տե՛ս **H. Duday, F. Laubenheimer, A. Tillier,** Sqlléles d'Aude, Nouveau-nés et nourrissons gallo-romans, Centre de Recherches d' Histoire Ancienne-vol. 144, serie amphores 3, Paris, 1995, էջ 12, 14, 15, 77, 79:

28 Տե՛ս **А. Апакидзе, Г. Гобеджишвили, А. Каландадзе, Г. Ломтатидзе,** Мцхета I, "Итоги археологических исследований, Археологические памятники Армазис-Хеви по раскопкам 1937-1946гг.", Тбилиси, 1958, էջ 209:

29 Տե՛ս **Գ. Քոչարյան,**Ծածկի քարե սալ Դվինից, «Լրաբեր», 1974, թ. 11, էջ 102-105, նույնի, Դվինը վաղ Արշակունյաց շրջանում (ուրվագծման փորձ), ՊԲՀ, 2002, թ. 3, էջ 206, 211:

30 Տե՛ս **Ա. Կանեցյան,** անդ, էջ 190:

31 Դամբարանների մասին փվյալներ եւ նկարներ տրամադրելու համար մեր երախտագիտությունն ենք հայտնում Թեղուտի արշավախմբի ղեկավար պ.գ.թ. Ս. Հոբոսյանին:

32 Տե՛ս **Ե. Աստրյան**, անդ, էջ 5:

միայն հեպագա պեղումները կարեւոր տեղեկություններ կարող են հաղորդել վաղ միջնադարում կղմինդրե թաղումների վերաբերյալ:

Կղմինդրի երկրորդային օգտագործման օրինակներ հանդիպում են Դվինում, որտեղ կղմինդրով հարթեցված են տարածքներ[33], իսկ Թալինից հայտնի են արտադրական կառույցում որպես առվակ օգտագործված կիսակլոր կղմինդրներ[34]:

Կղմինդրները պատել են կավալուծությամբ, նաեւ հատուկ ներկել են կարմիր կամ շագանակագույն ներկերով: Ներկելու նպատակը եղել է դրանք տեղումներից պաշտպանելը, իսկ գույնի ընտրությունը ունեցել է զուտ գեղագիտական նշանակություն: Ներկը քսվել է թրծելուց առաջ: Նշենք, որ ներկով պատել են ոչ միայն այն հատվածները որոնք երեւում են, այլ նաեւ չերեւացող մասերը: Կարմրավոր եկեղեցում հանդիպում են հարթ կղմինդրների օրինակներ, որոնց վրա վարպետը ներկը քսել է այն մասերին, որոնք մտնում էին կլոր կղմինդրի տակ եւ չէին երեւալու: Հետաքրքիր է Օշականից հայտնի հարթ կղմինդրի օրինակը, որի անգոբած մակերեսին կարմիր գույնով արված են ալիքներ:

Կղմինդրագործ վարպետների գեղագիտական ճաշակի մասին են վկայում Զվարթնոցի պեղումներից գտնված հարթ կղմինդրները, որոնց կարմիր ֆոնի վրա սպիտակ ներկով արված են բուսական զարդանաշխեր (նկ.11): Սրանք առայժմ եզակի օրինակներ են եւ հանդիպում են միայն Զվարթնոցում, ինչը մեկ անգամ եւս խոսում է հատուկ այդ տաճարի համար արտադրված լինելու մասին: Զարդանախշերն արված են կղմինդրի այն մասերում, որոնք ծածկի վրա չէին երեւալու: Օրինակներից մեկը՝ կարծես նմանակումը լինեն տաճարի սյուներին առկա Ներսես Կաթողիկոսի մենագրային նշանների՝ փաստելով Զվարթնոցի եկեղեցուն պատկանելը (նկ.12,12a):

Այսպիսով, Հայաստանում կղմինդրածածկ տանիքը հելլենիստական մշակույթի արգասիք էր, որը քաղաքական ու հոգեւոր նոր պայմաններում սկսեց կիրառվել մեծ մասամբ եկեղեցիների ծածկերի համար: Հայաստանում քրիստոնեական կառույցները պահպանեցին քրիստոնյա ողջ աշխարհին բնորոշ կղմինդրածածկ տանիքը մինչեւ Ժ դ., որից հետո այն փոխարինվեց ավելի դիմացկուն քարե սալերով (կղմինդրածածկ տանիքներ հայտնվում են նաեւ ուշ միջնադարում, հատկապես Արցախի ճարտարապետությունում, իսկ Սյունիքում հիմնականում օգտագործվել են օժանդակ շինությունների ծածկերի համար)[35]: Հասարակական եւ տնտեսական շինությունները շարունակում էին կառուցել ավանդական հարթ տանիքներով կամ գլխապտան սկզբունքով (նման երեւույթ առկա է նաեւ Իրանում)[36]:

33 **Կ. Ղաֆադարյան, Ա. Քալանթարյան,** Դվին քաղաքը եւ նրա պեղումները (1973-1980թթ.), Եր., 2002, էջ 79:

34 Տե՛ս **Ե. Ասատրյան, Ն. Սարգսյան,** Թալինի քաղաքատեղիի պեղումները. «Հայկական ԽՍՀ-ում 1987-1988թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան», զեկ. թեզ., Եր., 1989, էջ 99:

35 Տե՛ս **Մ. Հասրաթյան,** Սյունիքի XVII-XVIII դարերի ճարտարապետական համալիրները, Եր., 1973, էջ 148:

36 Տե՛ս **Г. Кошеленко,** Культура Парфии, Москва, 1966, էջ 85: